<<Դաստակերտի բուժտեխնիկայի գործարան>> ԲԲԸ-ի սնանակության վարույթով կազմակրեպվող անշարժ գույքերի աճուրդ վաճառքի մասին

2026-10-28 15:31:34

Հայտատու	Ֆիզիկական անձինք
Տեսակ	Աճուրդների մասին հրապարակային ծանուցումներ
Հիմք	Սնանկության մասին ՀՀ օրենքի 76-րդ հոդված

Հիմք ընդունելով ՀՀ Սնանկության դատարանի 15.06.2022թ.-ի թիվ ՍնԴ/0675/04/20 որոշումը և ղեկավարվելով «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 76-րդ հոդվածի 4-րդ կետը և «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքը, 20.11.2026թ.-ին ժամը 15:00-ին , ք.Երևան, Բագրատունյաց 11ա-19ա հասցեում հայտարարվում է <<Դաստակերտի բուժտեխնիկայի գործարան>> ԲԲԸ-ի անշարժ գույքերի բաց դասական եղանակով աճուրդ վաճառք:
ԼՈՏ 2. <<Դաստակերտի բուժտեխնիկայի գործարան>> ԲԲԸ-ի պարտավորությունների կատարումն ապահովելու համար Պարտապանին և/կամ երրորդ անձին սեփականության իրավունքով պատկանող ՀՀ Սյունիքի մարզ, գ. Տոլորս հասցեում գտնվող <<Տոլորսի արտադրամաս>>: Հողամասի մակերեսը 13.000քմ.: 1. Արտադրամաս, վարչական մաս՝ 323,23քմ, 2 հարկ, քարե կրող պատերով, շինության տանիքը՝ մետաղական թիթեղ, միջին վիճակ, միջհարկային ծածկը՝ երկաթբետոնյա, դռները՝ փայտե, բավարար վիճակ, պատուհանները՝ վատ-բավարար վիճակ, մասամբ մետաղապլաստե՝ լավ վիճակ, արտաքին հարդարումը ՝ միջին, սենյակների ներքին հարդարումը՝ հատակը մասամբ բետոնապատ, մասամբ փայտյա, պատերը՝ ներկապատ, մասամբ երեսպատված փայտանյութով, մասամբ սալիկապատ: Ներքին հարդարումը՝ բավարար: 2. Գլխավոր, զոդման, դրոշման արտադրամաս՝ 4.129,14քմ, 1 հարկ, քարե կրող պատեր, տեխնիկական վիճակը՝ վատ կիսաքանդ, տանիքը բացակայում է, միջհարկային ծածկ հիմնականում բացակայում է, առկա մասում՝ միջհարկային ծածկի սալեր, դռներ, պատուհաններ՝ բացակաում են, արտաքին հարդարումը՝ բավարար, ներքին հարդարում՝ շինությունը կիսաքանդ է, առկա պատերի մի մասը ներկապատ, տեղ տեղ գաջասվաղի թափված տեղամասերով: 3. Պահեստ՝ 488,18քմ, 1 հարկ, քարե կրող պատեր, տեխնիկական վիճակը՝ վատ կիսաքանդ, տանիք, դռներ, պատուհաններ բացակայում են, ներքին հարդարում՝ շինությունը կիսաքանդ է, առկա պատերի մի մասը ներկապատ, տեղ տեղ գաջասվաղի թափված տեղամասերով: 4. Նախապատ, ներկման, օդացման արտադրամաս՝ 469,64քմ, 1 հարկ, քարե կրող պատեր, տեխնիկական վիճակը՝ բավարար,

տանիքը՝ ազբոշիֆեր /բավարար վիճակ/, միջհարկային ծածկ՝ բացակայում է, մուտքի դուռը՝ մետաղական դարպաս, ներքին դռները՝ բացակայում են, պատուհանները՝ փայտե, վատ վիճակ, արտաքին հարդարումը՝ բավրար, առանց ներքին հարդարման։ 5. Պահեստ՝ 165,2 քմ, 1 հարկ, քարե կրող պատեր, տեխնիկական վիճակը՝ վատ կիսաքանդ, տանիք, դռներ, պատուհաններ բացակայում են, ներքին հարդարում՝ շինությունը կիսաքանդ է, առկա պատերի մի մասը ներկապատ, տեղ տեղ գաջասվաղի թափված տեղամասերով։ 6. Կաթսայատուն՝ 156,8քմ, 1 հարկ, քարե կրող պատեր, տեխնիկական վիճակը՝ վատ կիսաքանդ, տանիք, դռներ, պատուհաններ բացակայում են, ներքին հարդարում՝ շինությունը կիսաքանդ է, առկա պատերի մի մասը ներկապատ, տեղ տեղ գաջասվաղի թափված տեղամասերով։ 7. Էլ. ենթակայան՝ 48.41քմ, 1 հարկ, քարե կրող պատեր, տեխնիկական վիճակը՝ վատ կիսաքանդ, տանիք, դռներ, պատուհաններ բացակայում են, առանց ներքին հարդարման։ Լրացուցիչ նշումներ՝ գույքը ծանրաբեռնված է կադաստրային արժեքի պարտքով՝ մոտավոր չափը կազմում է 1.844.700 ՀՀ դրամ։
Մեկնարկային գինը՝ 19.204.103 /տասնինը միլիոն երկու հարյուր չորս հազար հարյուր երեք/ ՀՀ դրամ։
ԼՈՏ 4. <<Դաստակերտի բուժտեխնիկայի գործարան>> ԲԲԸ-ի պարտավորությունների կատարումն ապահովելու համար Պարտապանին և/կամ երրորդ անձին սեփականության իրավունքով պատկանող ՀՀ Սյունիքի մարզ, ք. Սիսիան, Շիրակի փող. 12 հասցեում գտնվող գործարանի շենք, շինություն։ օգտագործման նպատակը՝ վարչական շենք, արտադրամաս, պահեստ, մղման կետ, լցակայան, փայտամշակման արտադրամաս։ Հողամասի մակերեսը 39.700քմ.։ 1. Վարչական շենք՝ ընդհանուր մակերեսը՝ 2532,8քմ, 3 հարկ, քարե կրող պատեր, տանիքը՝ մետաղական թիթեղ, լավ վիճակի, միջհարկային ծածկը՝ երկաթբետոնյա, մուտքի դռները՝ մետաղական, ներքին դռները՝ փայտանյութ բավարար վիճակ, պատուհանները՝ փայտյա վատ-բավարար վիճակ, արտաքին հարդարումը միջին, սենյակների ներքին հարդարումը՝ հատակը մասամբ բետոնապատ, մասամբ փայտյա, պատերը ներկապատ, տեղ-տեղ գաջասվաղը թափված տեղամասերով, ներքին հարդարումը վատ։ 2. Արտադրամաս՝ ընդհանուր մակերեսը՝ 7362,4քմ, 1 հարկ, շինության տիպը՝ երկաթբետոնյա սալերով, շինության տեխնիկական վիճակը՝ երկաթբետոնյա սալեր, մասամբ քար, շինության տանիքը՝ մետաղական թիթեղ, լավ վիճակի, միջհարկային ծածկը՝ երկաթբետոնյա, մուտքի դռները մետաղական, ներքին դռները մետաղական և փայտանյութից, բավարար վիճակ, պատուհանները՝ մասամբ մետաղական, մասամբ փայտե, վատ վիճակ, արտաքին հարդարումը բավարար, ներքին հարդարումը վատ, սենյակների ներքին հարդարումը հատակ բետոն, պատերը մասամբ ներկապատ, մասմբ առանց հարդարման։ 3. Պահեստ՝ ընդհանուր մակերեսը 73,6քմ, 1 հարկ, քարե կրող պատեր, տեխնիկական վիճակը՝ բավարար,

տանիքը բացակայում է, միջհարկային ծածկը հիմնականում բացակայում է, դռներ, պատուհաններ բացակայում են, արտաքին հարդարումը բավարար, ներքին հարդարումը՝ առանց հարդարման։ 4. Մղման կետ՝ 53,4քմ, 1 հարկ, քարե կրող պատեր, տեխնիկական վիճակը՝ բավարար, տանիքը բացակայում է, միջհարկային ծածկը բացակայում է, դռներ, պատուհաններ բացակայում են, արտաքին հարդարումը բավարար, ներքին հարդարումը՝ առանց հարդարման։ 5. Լցակայան՝ 12,0քմ, 1 հարկ, քարե կրող պատեր, տեխնիկական վիճակը՝ բավարար, տանիքը ազբոշիֆեռ, բավարար վիճակ, միջհարկային ծածկը բացակայում է, դռներ բացակայում են, պատուհանները փայտե կոտրված ապակիներով, արտաքին հարդարումը բավարար, սենյակների հատակը բետոն, պատերը գաջասվաղ, ներքին հարդարման ընդհանուր վիճակը վատ։ 6. Պահեստ՝ ընդհանուր մակերեսը 876,6քմ, 1 հարկ, երկաթբետոնյա հիմքով մետաղական կրող կոնստրուկցիա, տեխնիկական վիճակը՝ միջին, պատերը՝ մետաղական թիթեղ, տանիքը մետաղական թիթեղ լավ վիճակ, արտաքին հարդարումը բավարար, միջհարկային ծածկը բացակայում է, մուտքի դռները մետաղական դարպաս, ներքին դռները բացակայում են, պատուհանները մետաղական միջին վիճակ, առանց ներքին հարդարման։ 7. Փայտամշակման արտադրամաս՝ ընդհանուր մակերեսը 189,0քմ, 1 հարկ, երկաթբետոնյա հիմքով մետաղական կրող կոնստրուկցիաների վրա ազբոշիֆերից ծածկ, տեխնիկական վիճակը վատ-բավարար, տանիքը ազբոշիֆեր, կոտրված հատվածներով, վատ վիճակի։ Առկա են միքանի դեկորատիվ ծառեր։
Լրացուցիչ նշումներ՝ գույքը ծանրաբեռնված է կադաստրային արժեքի պարտքով՝ մոտավոր չափը կազմում է 48.473.700 ՀՀ դրամ։
Մեկնարկային գինը՝ 72.800.284 (յոթանասուներկու միլիոն ութ հարյուր հազար երկու հարյուր ութսունչորս) ՀՀ դրամ։

Հայտարարության ընդհանուր և ամբողջական տեքստին կարող եք ծանոթանալ կցված ֆալում։

Հայտարարություն անշարժ գույքեր.PDF

37491210111
armenak.adamyan@mail.ru
ՀՀ, ք. Երևան, Բագրատունյաց 11ա-19ա